
**ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՊԱՐՈՒՅՐ
ՍԵՎԱԿԻ ՊՈԵՄՆԵՐԻ**

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ն. Հ.

Հոմանիշները հատուկ են լեզվի իմաստակիր բոլոր միավորներին. դրանք վերաբերում են բառապաշարին, դարձվածաբանությանը, քերականությանը, ոճագիտությանը: Տարբեր լեզուներում հոմանշության դրսևորման եղանակներն ու առաջացման, զարգացման օրինաչափությունները տարբեր են, հատուկ են միայն տվյալ լեզվին: Հոմանիշների լայն կիրառությունն է պատճառը, որ դրանց նկատմամբ հետաքրքրությունը սկսվել է դեռևս անտիկ շրջանից ու չի դադարել մինչ այսօր: Հոմանիշների ուսումնասիրության, դասակարգման սկզբունքների, տեսակների ու գործածության ոլորտների մասին պատկառելի գրականություն կա՝ թե՛ հայերեն, թե՛ օտար լեզուներով: Բայց հոմանիշներին վերաբերող բազմաթիվ կնճռոտ հարցեր դեռևս լուծված չեն, իսկ նրանց մասին եղած կարծիքները հաճախ իրարամերձ են ու տարաբնույթ¹: Դրանք հիմնականում վերաբերում են հոմանիշների սահմանմանը, տերմինների միօրինակացմանը, տարբերակմանն ու դասակարգմանը, ծագմանն ու զարգացմանը, քերականական հոմանիշների գոյությանն՝ ընդհանրապես, դրանց տեսակներին, ինչպես նաև ոճական կիրառությունների ու գործածության ոլորտների մի շարք այլ հարցերի:

Դիտարկենք (հիմնականում ոճաբանության դիրքերից) լեզվական այս բավական հետաքրքիր ու տարողունակ իրողության միայն մեկ կողմը՝ շարահյուսական հոմանիշները և դրանց դրսևորումը Պարույր Սևակի՝ հայ մեծագույն բառագետ-բանաստեղծի պոեմներում:

Քերականական հոմանիշներ են համարվում միևնույն քերականական իմաստների, քերականական հարաբերությունների դրսևորումները տարբեր քերականական միջոցներով: Դրանք ունենում են իմաստային կամ ոճական նրբերանգներ, և դրանց հիմքում ընկած են միևնույն առարկայական հարաբերությունները²:

Բառական հոմանիշների հետ համեմատած՝ ավելի ընդգրկուն սահմաններ ունեն քերականական հոմանիշները. դրանք կարող են դրսևորվել բառաձևի, բառակապակցության, դերբայական դարձվածների ու նախադասության մակարդակներում: Բայց, չնայած այսպիսի լայն ընդգրկմանը, քերականական հոմանիշներն ավելի քիչ են ուսումնասիրված, քան բառական հոմանիշները: Քերականական հոմանիշների մի տեսակն են կազմում շարահյուսական հոմանիշները, որոնց քննությունը բավական հետաքրքիր նյութ կարող է տալ ուսումնասիրողին:

¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Սուքիասյան Ա.**, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1971:

² Տե՛ս **Պառնասյան Ն.**, Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1970, էջ 18:

Շարահյուսական հոմանիշներ կարող են դառնալ բառակապակցություններն ու նախադասությունները: Շարահյուսական հոմանիշները քերականական տարբեր միջոցներով արտահայտում են առարկաների կամ երևույթների միջև եղած նույն հարաբերությունները: Օրինակ՝

Հենց այդ պահին,

Նույն ժամանակ

Սառնամանիքն է ինքնակամ կարգվում հսկիչ...³:

-ԵՎ դու, Կույս Մարիամ, չմիջնորդեցիր...

...ԵՎ դու, Տիրամա յր, լռեցի՜ր կրկին

նրանց չարչարանք-հատանքի հանդեպ...⁴:

...Առանց հավատի կյանքում

դյուրին չէ նույնիսկ մեռնելը,

Իսկ ապրելն... արդեն անկարելի է:

...Առանց հավատի հեշտ չէ մեռնելը,

Իսկ ապրելն... արդեն անտանելի է (313,327):

Առաջին օրինակում հոմանիշներ են դարձել շարահյուսական նվագագույն միավորները՝ բառակապակցությունները, իսկ վերջին օրինակներում՝ նախադասությունները:

Շարահյուսական հոմանիշների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանցով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը իր հաղորդածի նկատմամբ, հեղինակի այն սուբյեկտիվ վերաբերմունքը, որ հուզարտահայտչական կամ ոճական տարբեր երանգավորումներ է տալիս խոսքին: Օրինակ՝ «Պարո՛ւմ է նա, Վառո՛ւմ է նա, Եվ բոլորը՝ մեծ թե պուճուր, Մոռանում են հասակն իրենց, Դուրս են ելնում տարիքներից...» (ԱԶ,117) նախադասության մեջ ընդգծված վերջին հատվածները շարահյուսական հոմանիշներ են, քանի որ արտահայտված առաջին միտքն ավելի հարստանում, ոճական նոր երանգավորում ու լիցք է ստանում երկրորդ հատվածով: Եվ թեև երկու նախադասություններն էլ նույն իմաստն են արտահայտում, բայց, այնուամենայնիվ, դրանք նաև տարբերվում են իրարից. առաջինը ոճականորեն ավելի չեզոք է, երկրորդը՝ առավել հագեցած, փոխաբերական իմաստն էլ ակնհայտորեն ավելի պատկերավոր ու արտահայտիչ է դարձնում կապակցության վերջին հատվածը: Բերված օրինակում հոմանիշ շարահյուսական միավորների՝ կից տողերում գործածելը արված է նաև որոշակի նպատակադրումով. ակնհայտ է, որ խոսքը երկարաշունչ ու ձանձրալի է դառնում, երբ նույն հատվածում անընդհատ կրկնվում են ոչ միայն նույն բառերը, այլ նաև քերականական նույն

³ Մևակ Պ., Անլուրի զանգակատուն (այսուհետև այս ստեղծագործությունից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից), Ե., 1990, էջ 106:

⁴ Մևակ Պ., Երկեր, հ. 3 (այսուհետև հատորից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից), Ե., 1983, էջ 272-273:

միջոցներն ու կառույցները: Ուստի ավելորդ կրկնությունից և միօրինակությունից խուսափելու համար Սևակը ընտրել է հոմանիշ շարահյուսական երկու կառույցներ, որոնք նշված հատվածը դարձնում են ավելի արտահայտիչ, իսկ ռճական տեսակետից՝ նաև բազմազան:

Շարահյուսական հոմանիշների առանձնահատկություններից մյուսն այն է, որ նրանք երբեք չեն համընկնում իրենց քերականական իմաստների ծավալներով, թեև ունեն գրեթե նույն բառային կազմը⁵: Այսպես, «Օրերս նա մեր տուն եկավ» և «Այս օրերին նա մեր տուն եկավ» նախադասությունները գրեթե նույնն են իրենց բառային կազմով, սակայն տարբեր են իրենց քերականական իմաստների ծավալով: Առաջին նախադասության մեջ ժամանակի պարագան արտահայտվել է գոյական+ցուցական հոդ կապակցությամբ, իսկ երկրորդում՝ ցուցական դերանուն+գոյական կապակցությամբ: Կարելի է ասել, որ այս նախադասությունները հոմանիշ են դարձել միայն իրենց քերականական իմաստների տարբերության հաշվին:

Քերականական միջոցներ են նաև տրամաբանական շեշտն ու հնչերանգը, որոնց փոփոխությամբ Սևակն իր պոեմներում ստեղծում է բազմաթիվ հետաքրքիր հոմանիշ բառակապակցություններ ու նախադասություններ:

Եվ չարեցի՞ն:

Այն էլ ինչպե՛ս, ի՞նչ արեցին... (ԱԶ, 224):

Իսկ դուք նկատե՞լ եք...

...Չե՞ք նկատել արդյոք... (341):

Այս ամենը հաշվի առնելով՝ տանք շարահյուսական հոմանիշների սահմանումը. *Շարահյուսական հոմանիշներ են կոչվում սովորաբար նույն հիմնական բառակազմն ունեցող այն բառակապակցություններն ու նախադասությունները, որոնք տարբեր քերականական միջոցներով արտահայտում են նույն կամ գրեթե նույն իմաստը, առարկաների միջև գոյություն ունեցող նույն հարաբերություններն ու կապերը, հավասարաթեք են իրար և, միաժամանակ, դրսևորում են խոսողի (հեղինակի) տարբեր վերաբերմունքը, մոտեցումը հաղորդածի նկատմամբ*⁶: Սակայն այս սահմանման առնչությամբ ուզում ենք մի վերապահում, անել: Խոսքը վերաբերում է հոմանիշ կառույցների բառային կազմերի նույնությանը, որ որոշ ուսումնասիրողներ պարտադիր պայման են համարում շարահյուսական կառույցների հոմանշության համար: Մեր կարծիքով, հոմանիշ կարող են դիտվել նաև բառակազմերով չնույնացող, սակայն հոմանիշ (երբեմն նույնիսկ հականիշ) բառերով ձևավորված և զուգահեռ կառուցվածք ունեցող միավորները, որպիսիք են մեր ընտրած օրինակներից շատերը: Բերենք ևս մեկ օրինակ.

⁵ Պառնասյան Ն., նշվ. աշխ., էջ 37:

⁶ Տե՛ս նույն տեղում., էջ 38: Տե՛ս նաև՝ Թեյլան Լ., Ժամանակային և պատճառահետևանքային հարաբերությունն արտահայտող բարդ նախադասությունների հոմանիշ կառույցները ժամանակակից հայերենում (Լեզվի և ռճի հարցեր, 1985, N 9, էջ 8):

Թող դժկամությամբ ու հսկա ջանքով
Բարձրանան-իջնեն կշռաթաթերը,
Անվստահությամբ ու կասկածանքով
Իրար հոշոտեն կշռաթաթերը,
Եվ ճիշտը խոսի, լռեն ստերը (ԱԶ, 63):

Այստեղ հականիշ բայերով (խոսել-լռել) արտահայտվել են հոմանիշ նախադասություններ: Նշենք մի հանգամանք նա. որոշ լեզվաբաններ կարծում են, որ շարահյուսական հոմանիշներ կարող են դառնալ միայն ամբողջական շարահյուսական կառույցները և ոչ թե դրանց առանձին մասերը⁷: Մեր կարծիքով, շարահյուսական հոմանիշներ են նաև նույն նախադասության մեջ միմյանցից ստորակետով բաժանված այն համադաս, որոշ դեպքերում՝ նաև ստորադաս կառույցներն ու նախադասությունները, որոնք արտահայտում են նույն կամ գրեթե նույն իմաստները:

Սակայն... ճշմարիտ-իրավ աքսորը գալիս է հետո,
Երբ որ քեզանից ինքդ ես աքսորվում,

Երբ որ քեզանից գատվում է կարծես կյանքդ սեփական...(291):

Եվ պատահական չէ, որ շարահյուսական հոմանիշ կառույցները Պ. Մկակի պոեմներում հանդես են գալիս միևնույն նախադասության մեջ: Այսինքն, հաճախ նույն բարդ նախադասության մեջ առկա են երկու համադաս կամ ստորադաս կառույցներ, որոնք հոմանիշներ են, և եթե դրանք իրարից չտրոհենք, ապա ակնհայտորեն կունենանք՝ նախադասության մակարդակի շարահյուսական հոմանիշ կառույցներ, ինչպես՝

Ձորավոր էին աստվածները հին,
Այնքան զորավոր,

Որ անկեղծ էին ու չէին ստում (310):

...Դու իմ տունն ես եկել,

...Որ չգնա՛ս,

Մնա՛ս,

Ընդմիջտ մնաս...(356):

Թեթևանում էր երբ աշխատանքից,

Ծառայությունից գլուխն ազատում,

Հեռանում էր նա խուցից ու վանքից... (ԱԶ, 39):

Անշուշտ, շարահյուսական հոմանշությունը բավական բարդ երևույթ է: Այն ընդգրկում է լեզվի շարահյուսական կառուցվածքն ամբողջությամբ: Հոմանշային հարաբերություններով կարող են կապված լինել նախադասության տարբեր տեսակներ ու տիպեր՝ միակազմ ու երկկազմ, դիմավոր ու անդեմ, լրիվ ու թերի, կրավորական ու ներգործական կառուցվածքի, պարզ ու բարդ, բարդ համադասական ու բարդ ստորադասական, ուղիղ և անուղղակի խոսքը և այլն: Սակայն սրանք բոլորն էլ ի վերջո իրենց դրսևորումն են գտնում պատմողական, հարցական, հրամայական կամ բացականչական նախադասություններում,

⁷ Պառնասյան Ն., նշվ. աշխ., էջ 77:

որոնցից յուրաքանչյուրն ունի իր կառուցվածքային և հնչերանգային յուրահատկությունը.

Ու ձգվում է ճանապարհը արտրանքի (ԱԶ, 192):
Իսկ արտրի ճանապարհը վախճան չուներ (ԱԶ, 193):
Բայց սիրելիս, քեզ հետ եղել է վատթարը,
Քեզ հետ պատահել է ահավորը (334):
Դարեր ի վեր վառում են մեզ,
Այրում են մեզ,
Դարձնում մոխիր
Հնոցի մեջ խուլ չարության,
Խարույկի մեջ քեն ու ռիսի...(ԱԶ, 221):

Պատմողական հոմանիշ նախադասությունները կարող են լինել ամենատարբեր կառուցվածքի՝ լրիվ կամ թերի, պարզ համառոտ կամ պարզ ընդարձակ, բարդ կամ բազմաբարդ և այլն: Հաճախ միևնույն կամ գրեթե միևնույն միտքն արտահայտելու համար գործածվում են տարբեր բնույթի նախադասություններ, որոնք իրարից տարբերվում են միայն հաղորդածի նկատմամբ խոսողի վերաբերմունքի տարբեր դրսևորումներով, հնչերանգի փոփոխությամբ: Այսպիսի գուգահեռ հոմանշային ձևեր ունեն դրական և ժխտական կառուցվածքով պատմողական, պատմողական-հարցական, պատմողական-հրամայական, հարցական-հրամայական, հարցական-բացականչական նախադասությունները: Քննենք Պ. Սևակի պոեմներում առկա վերոհիշյալ տիպերից ամենատարածվածները:

1. *Դրական և ժխտական կառուցվածքի հոմանիշ պատմողական նախադասություններ:*

Լեզվում, սովորաբար, հաստատում կամ ժխտում արտահայտելու համար գործածում ենք համապատասխանաբար բայի դրական կամ ժխտական ձևերը, ինչպես նաև՝ հաստատական բառեր, ժխտական մասնիկներ կամ ժխտական իմաստով բառեր.

...Կարծես բաշխելիս բնավ չեն նայել,
Իսկ թե նայել են՝ բա՛ն չեն խնայել,
Փռել են այնպե՛ս շռայլ ու առատ... (ԱԶ, 82):
Հայրենիքն այն է, որ չեն որոնում:
Հայրենիքն այն է, որ գտնված է
Ի սկզբանե, ի ծնե և միշտ,
ուրեմն նաև նա չի էլ կորչում (295):

Բերված օրինակներում հոմանշությունը դրսևորված է բայի դրական և ժխտական ձևերով: Այն կարող է դրսևորվել նաև բաղադրյալ ստորոգյալ կազմող անվան և օժանդակ բայի դրական ու ժխտական ձևերի միջոցով.

...բայց ավելի շատ՝ մեր ծով բարության՝
ու մեր բնածին այլասիրության՝
որից զրկվելով՝ մենք կարծես մե՛նք չենք,
կիսավերակ ենք և կանգուն չենք չե՛նք...(305):
Քո դե՛մքը...

Գիտե՛մ,
Նա գրավի՛չ չէ,
Գուցե վանի՛չ է,
Անախորժալի... (435):

Բայց նա քոնն է միայն և իմը չէ (347):

Հաճախ էլ խոսքը ոճավորելու և ավելի պատկերավոր դարձնելու համար հաստատումը արտահայտվում է ժխտական կառուցվածքի նախադասություններով, ժխտում դրսևորող քերականական միջոցներով, իսկ ժխտումը՝ դրական կառուցվածքի նախադասություններով, ինչպես նաև հնչերանգի շնորհիվ: Պարույր Սևակի պոեմներում կան բազում օրինակներ, որտեղ հաստատումն արտահայտված է ժխտական կառուցվածքի նախադասություններով և հակառակը: Նման հոմանշային գույգերը հաճախ հանդես են գալիս կից տողերում:

*Չէ՛, նա չէ՛ր կարող չլինել կյանքում,
Նա պիտի լիներ (ԱԶ, 150):*

Սևակը մեծ երգահանի՝ Կոմիտասի լինելության անպայմանությունը, անխուսափելիությունը շեշտում, ընդգծում է հարկադրական եղանակի բայով կազմված դրական կառուցվածքի նախադասությամբ, որին հոմանիշ է բերված հատվածի առաջին մասը, այսինքն՝ կրկնակի ժխտում պարունակող, բայց դրական իմաստ ունեցող նախադասությունը. այստեղ կրկնակի ժխտմամբ հաստատվում, հիմնավորվում է միտքը:

2. Հոմանիշ հարցական-բացականչական նախադասություններ:

Հարցական և դրան համարժեք բացականչական հոմանիշ նախադասությունները ցուցաբերում են մի շարք իմաստային և ոճական առանձնահատկություններ: Այս կառույցների հարցական նախադասություններում հարցը սովորաբար տրվում է առանց պատասխանի ակնկալիքի:

*Սակայն ինչպե՞ս չկեռանաս,
Երբ կացինն է բունըդ տաշում,
Երբ սղոցն է ճյուղքըդ մաշում,-
Ղե՛, արի, և
... Կեռանա՛լ մի (ԱԶ, 191):*

Այստեղ հարցը տրված է, և հարցի մեջ արդեն իսկ առկա է պատասխանը. «Սակայն ինչպե՞ս չկեռանաս...», այսինքն՝ չկեռանալ չես կարող:

Եվ չարեցի՞ն:

Այն էլ ինչպե՛ս, ի՞նչ արեցին... (ԱԶ, 224):

Այս նախադասության մեջ ևս հարցը պարունակում է նաև պատասխան, իսկ այդ պատասխանն ավելի է բացահայտվում, ակնառու դառնում հաջորդ տողում բերված դրան հոմանիշ բացականչական նախադասության իմաստով: Այստեղ «Այն էլ ինչպե՛ս, ի՞նչ արեցին...» նախադասությունը իր բացականչական հնչերանգով շատ ավելի խոսում է, ավելի շատ տեղեկություն է տալիս

«արվածների» մասին, քան եթե Սևակը հերթով թվեր, թե ինչ արեցին կամ ինչպես արեցին:

Ասենք նաև, որ վերը նշված օրինակները շարահյուսական հոմանիշներ են միայն բերված բնագրերում: Բնագրից դուրս դրանք բոլորովին էլ հոմանիշ նախադասություններ չեն: Եվ միայն Սևակի գրչի տակ, դրվելով իրար կողքի կամ կից տողերում և բացահայտվելով ու լրացվելով համապատասխան կախյալ նախադասություններով՝ դարձել են շարահյուսական հոմանիշներ:

Զուտ սևակյան լեզվամտածողության արգասիք են նաև ստորև բերվող հարցական-հարցական և հարցական-պատմողական բնույթի նախադասությունները.

3. *Հարցական-հարցական շարահյուսական հոմանիշ նախադասություններ.*

*Ո՞նց չմնա նա մեկուսի,
Ո՞նց խառնվի, ասի-խոսի,
Թե... հայերեն վատ է խոսում (ԱԶ, 14):*

Կամ՝

*Ու՞մ մտքով կանցներ, և ո՞վ էր կարծում,
Թե պիտի շողա Գողթան շառավիղ...(ԱԶ, 11):*

Երկու օրինակներում էլ խոսքը Կոմիտասի մասին է, և երկու դեպքում էլ հոմանիշներ են դարձել ճարտասանական հարցում արտահայտող նախադասությունները: Այս նախադասություններում հարցում (*զարմացական հարցում*) արտահայտելով՝ հեղինակը շեշտում է կատարվելիք գործողությունների առաջին հայացքից թվացյալ անհնարինությունը, իսկ հարցական դերանունները (*հատկապես այս դերանունների խոսակցական տարբերակները*) և բառերը ավելի շեշտակի են դարձնում տվյալ գործողությունների անհնարինության վերաբերյալ հեղինակի կարծիքը:

Ի տարբերություն սրանց, Սևակի պոեմներում առկա են նաև օրինակներ, որտեղ դրական կառուցվածքի և հարցական բնույթի նախադասություններն ունեն ժխտական իմաստ և ընդհակառակը, այսպես՝

*Եվ դու ինչպե՞ս հիմա բերան իսկ չբանաս,
Ինչպե՞ս դու նրանց դեմ չըմբոստանաս,
Եթե շա՛տ լավ գիտես.*

Բոլոր օրենքները նրա՛ համար են լոկ,

Որ պաշտպանեն կյանքում մարդկայինը... (351):

Ընդգծված նախադասություններն արտահայտում են ճարտասանական հարցում, ունեն ժխտական կառուցվածք, բայց արտահայտում են հաստատական, դրական բովանդակություն: Բերենք նման կառուցվածքի այլ օրինակներ ևս.

*Եվ չվախենա՞ս:
Ո՞նց չվախենաս... (436):
Ո՞նց չմնա նա մեկուսի,
Ո՞նց խառնվի, ասի-խոսի...(ԱԶ, 14):*

Իր կառուցվածքով բավական հետաքրքիր է վերջին օրինակը: Այս նախադասության առաջին հատվածն ունի ժխտական կառուցվածք, որն արտահայտվել է ըղձական եղանակի բայի ժխտական ձևով: Իսկ երկրորդ հատվածը, թեև ունի բացահայտ ժխտական իմաստ, բայց արտահայտված է ըղձական եղանակի բայերի դրական ձևերով: Այսինքն, այստեղ շարահյուսական հոմանիշ է դարձել մի նախադասություն, որի մի եզրն արտահայտված է ժխտական, իսկ մյուսը՝ հաստատական կառուցվածքի կապակցություններով:

4. Հարցական-պատմողական կամ պատմողական-հարցական նախադասություններ:

Հոմանիշներ կարող են դառնալ նաև այն կառույցները, որոնց մի եզրն ունի հարցական բնույթ, մյուսը՝ պատմողական: «Անլուրի զանգակատուն» պոեմի վերջին հատվածում Սևակը իր խոսքն ավելի արտահայտիչ, ավելի հուզական դարձնելու համար գործածում է ոճական մի հնարանք. նա ուղղակի դիմում է իր պոեմի հերոսին, և մեծ երգահանի կյանքի ու գործի որոշ առանձնահատկություններն ու յուրահատկությունները ո՛չ թե սոսկ թվում է կամ պատմում, այլ դիմում է հենց իր հերոսին.

*Չու՝ երազկոտ, և չիմացար,
Ա՛խ, որտեղի՞ց չիմանայիր.
Որ այն, ինչ քո ազգամեծար՝
Ու մեծ հոգով դո՛ւ կամեցար՝
Որպես երա՛զ, մտքի շշու՛նջ,
Պիտի մի օր ստանա շու՛նչ
Ստանա ձև՝... (ԱԶ, 226):*

Այս հատվածում ընդգծված առաջին նախադասությունն իր բնույթով պատմողական է, իսկ երկրորդը՝ հարցական, թեև նրանում առկա է նաև որոշակի բացականչական երանգ: Այսինքն, այստեղ հոմանիշ են դարձել, մի կողմից, պատմողական, մյուս կողմից՝ հարցական նախադասություններ: Կամ՝

*Էհ՛, Վարդապե՛տ, ո՞վ չգիտի,
Էլ ուր մնաց դու՛ չիմանաս... (ԱԶ, 112):*

5. Հրամայական-հրամայական բնույթի հոմանիշ նախադասություններ.

*- Օ՛, կնատարազ այրերի ոխի՛ց վախեցե՛ք կյանքում
և սարսափեցե՛ք նրանց վրեժից անբեկանելի:
...Օ՛, կնատարազ այրերի քենի՛ց դողացե՛ք անվերջ
և սահմոկեցե՛ք վրեժի՛ց նրանց (283):*

Կամ՝

*Ասա՛, Վարդապե՛տ, մի՛ պահիր թաքուն (ԱԶ, 150):
Պետք է սարսափե՛լ մուրացիկներից գայիսոնակիր,
... Վախեցե՛ք կյանքում սովազարներից
առավել, քան թե խելագարներից... (261):*

Ամփոփելով՝ արձանագրենք, որ հայոց լեզուն ստեղծագործող անհատին տալիս է ընտրություն կատարելու մեծ հնարավորություն՝ թե՛ բառական, թե՛ քերականական իմաստներ ու հարաբերություններ արտահայտելու համար:

Քերականական, և հատկապես շարահյուսական հոմանիշների այս բազում և բազմապիսի ձևերի առկայությունը լեզվում դրա վառ ապացույցն է: Իսկ Սևակը մեծ վարպետությամբ է օգտվել հայոց լեզվի ընձեռած հնարավորություններից: Բանաստեղծի տաղանդի վառ դրսևորումներից է հենց այն փաստը, որ նա ստեղծում, արարում է շարահյուսական հոմանիշների բազմատեսակ օրինակներ: Սևակի պոեմներում կարելի է գտնել շարահյուսական հոմանիշների շատ ու շատ գույգեր՝ գործածված կողք կողքի: Դա մի անգամ ևս վկայում է Սևակ գեղագետի, մտածողի, լեզվագետի ու «լեզվաշինարարի» մտածողության պատկերավորության և անկրկնելիության, նրա յուրահատուկ և եզակի ոճի բազմազանության մասին:

СИНТАКСИЧЕСКИЕ СИНОНИМЫ В ПОЭМАХ П. СЕВАКА

ВАРДАНЯН Н. Г.

Резюме

В отличие от лексических синонимов, грамматические, в частности, синтаксические синонимы в армянском языкознании почти не изучены. Наиболее яркие синтаксические синонимы встречаются в поэмах выдающегося армянского поэта, мастера словотворчества Паруйра Севака. Следует уделить особое внимание рассмотрению сути (повествовательные синонимичные предложения с утвердительной и отрицательной структурой, синонимичные предложения следующего характера: вопросительное-восклицательное, вопросительное-вопросительное, вопросительное-повествовательное, повелительное-повелительное) различных контекстуальных проявлений, структуры и стилистического значения синтаксических синонимов.